ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 20.10.2023թ. N 359/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.11.2023թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Վանյանը, գնահատող հանձնաժողովի անդամ Շ.Առաքելյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Գ.Հախինյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հ.Վանյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Քրիստափորի-2/2)
2. «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Արշակունյաց պողոտա-2, գրասենյակ-525)
3. «Սմարթլայն» ՍՊԸ-ն (ք. Երևան, Վարդանանց-110)
4" «ԻՆԴԵԿ» ՍՊԸ-ն (ՀՀ,Արմավիրի մարզ, գյուղ Ապագա 6փ 39տ)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ապրանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորված ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	Թուղթ A4 ֆորմատի	34 180 000	20%	41 016 000	54 145 000
2		«Փեյփր Հաուս» ՍՊԸ		34 592 500	20%	41 511 000	
3		«Սմարթլայն» ՍՊԸ		40 342 500	20%	48 411 000	
4		«ԻՆԴԵԿ» ՍՊԸ		40 750 000	20%	48 900 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:
4. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Վանյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան